գել 'ի պաշտօն և հանել անտի, 'ի պարագայս կալուածական խնդրոց, և 'ի դրաւելն զստացուածս վանականաց Առաջնորդաց, Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից և հետեւակաց և ազգին Հայոց, Եկեղեցեաց, Վանօրէից, Խորանաց և այլոց Ուխտատեղեաց՝ հետեւակ և համազգայնոցն իւրեանց, որք տիրեալ եւ ժառանգեալ են 'ի սկզբանէ անտի։ Եւ Պատրիարքունք Հայոց տիրեսցեն եւ ժառանգեսցեն զայսոսիկ տեղիս, որք են՝ 'ի կեդրոնի տաճարին Ս. Յարութեան Գերեզմանն եւ արտաքոյ Երուսաղէմի գերեզմանն Ս. Աստուածածնի, և 'ի Բեթղեհէմ Այրն Ծննդեան Քրիստոսի, և՝ զբանալի հիւսիսային դրան։ Եւ 'ի ներքս 'ի դուռն Ս. Յարութեան 2 աշտանակք եւ կանթեղք, եւ 'ի դուռն Գերեզմանին եւ 'ի ներքս կանթեղք մոմեղէնք և խունկ. և 'ի մէջ տաճարին Ս. Յարութեան, ըստ օրինաց իւրեանց յելանելն Լուսոյն ընդ հետեւակ համազգայինս իւրեանց մտանել 'ի Գերեզմանն և Թափօր առնել շուրջ զնովաւ։ Եւ 'ի ներքս մեծի դրան վերին և ստորին տեղիքն, և երկու պատուհանքն, խորանք և ուխտատեղիք 'ի ներքս անդ՝ և Ջրհորն, և 'ի դաւթի տաճարին Ս. Յարութեան եկեղեցին Ս. Յովհաննու, եւ յարտաքս մերձ եկեղեցւոյն Ս. Յակոբայ, Ս. Փրկիչ, եւ այլ վանօրայք, գերեզմանատունք, սենեակք և հիւրանոցք 'ի Բեթղեհէմ՝ մերձ յԱյրն Ծննդեան, այդիք՝ պարտէզք ձիթենիք, և այս ամենայն եկեղեցիք վանօրայք, խորանք ուխտատեղիք, և հետեւակ համազգայինք, և այլ ստացուածք և նախնական պարագայք նոցին, որպէս սահմանեալ է։ Եւ մի ոք երբէք 'ի պաշտօնէից Տէրութեանս և կամ յայլոց միջամուխ լեալ նեղեսցէ զուխտաւորս Հայոց որք գնան 'ի Յորդանան գետ, 'ի տօնավաճառս և յայլ տաճարս և յուխտատեղիս, առնել ըստ մտաց Կայսերական երջանիկ նշանիս, որպէս գրեցաւ 'ի վեր անդր, եւ մի թողուլ զոք յօտար ազգաց լինիլ միջամուխ և նեղել զնոսա։ Վասն այսորիկ մի ոք 'ի Կայսերական տոհմէս կամ 'ի Նախարարաց՝ և կամ առհասարակ ամենայն պաշտօնէից Տէրութեանս 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս մի և մի իւիք յինչ և իցէ պատճառս իրաց միջամտեալ հակառակեսցին և փոփոխեալ այլայլեսցեն, և եթէ ոք